# Շունչ
# *Breath*

Նախագիծը՝ **Վազգեն Բրուտյանի**

Մասնակիցներ՝ **ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ուսանողներ  և շրջանավարտներ**

Project by: **Vasken Brudian**

Participants: **Students and Alumni of TUMO Center for Creative Technologies**

## Երկրաշունչ և Երկնաշունչ

2015
Խառը տեխնիկա
345 x 1030 սմ

Ստեղծագործության մեջ օգտագործվել են գրություններ սբ. Գրիգոր Նարեկացու և Մխիթար Հերացու ձեռագրերից:

## The Tangible and the Ethereal

2015
Mixed media
345 x 1030 cm

Passages from the manuscripts of St. Grigor Narekatsi and Mkhitar Heratsi are featured in this artwork.















## Ոգեշնչում
2015
Խառը տեխնիկա
520 x 390 սմ

Այս աշխատանքների համադրության համար հիմք է հանդիսացել Գեղարդավանքի (4-րդ դար) ժայռափոր խաչքարերի դասավորությունը. օգտագործվել են գրություններ սբ. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից:

## Inspirit
2015
Mixed media
520 x 390 cm

The arrangement of the kachkar (cross-stones) in the caves of Geghard Monastery (4th century) serves as the basis for the combination of these works. The writings of St. Gregory's *Book of Lamentation* poem are also included.



**Վազգեն Բրուտյանը** ճարտարապետ է, նախագծող և արվեստագետ ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքից: Ուսումնասիրելով արվեստ և ճարտարապետություն՝ Բրուտյանն իր աշխատանքներում համադրում է այդ երկու ուղղությունները: Նրա ստեղծագործությունները ցուցադրվել են Միացյալ Նահանգների թանգարաններում և ցուցասրահներում՝ անհատական և խմբային ցուցահանդեսների շրջանակներում: Որոշ ժամանակ աշխատելով լավագույն ճարտարապետական ընկերություններում՝ Բրուտյանը Լոս Անջելեսում ձևավորում է Archi Design Group-ը: 2009 թվականին հիմնում է «Փորձարարական արվեստ և ճարտարապետություն կենտրոն»-ը՝ հանդես գալով որպես կենտրոնի տնօրեն և համադրող: Այդտեղ ցուցադրվել են այն սկսնակ և հայտնի արվեստագետների, ճարտարապետների, կինոռեժիսորների և լուսանկարիչների աշխատանքները, որոնք նորարարությունների շնորհիվ նպաստել են իրենց ընտրած ուղղության զարգացմանը: 2013 թվականից Վազգեն Բրուտյանը տեղափոխվել է Երևան: Ներկայումս նախագծման դասընթացներ է անցկացնում ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում, որտեղ նաև ղեկավարում է իր նախաձեռնությամբ ձևավորված «Արդեան» նախագծող խումբը: Վերջինս նպատակ ունի աջակցել Հայաստանում արվեստի, ճարտարապետության և դիզայնի զարգացմանը:

**Vasken Brudian** is an architect, designer, artist from Los Angeles, California. Having studied art and architecture, Brudian employs the knowledge of both disciplines in his work. His artistic work has been exhibited in both solo and group exhibitions in museums and galleries across the United States. After working at some of the best architectural firms, he formed Archi Design Group in Los Angeles. In 2009, he established the Center for Experimental Art and Architecture and acted as its director and gallery curator. The gallery exhibited the work of emerging and established artists, architects, filmmakers, and photographers who had demonstrated innovation and contributed to the advancement of their respective disciplines. Since 2013 Vasken resides in Yerevan, Armenia. He currently teaches design at TUMO Center for Creative Technologies and is the initiator and the principal of Ardēan Design at TUMO, dedicated to transformative advancement of art, architecture and design in Armenia.







ISBN 978-9939-9121-5-8

CAFESJIAN
CENTER FOR THE ARTS